

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ



ՄԱՐԱՏ ամառի Յուլիսի տե-
սորին մէջ եղած յայտարարու-
թեան համաձայն՝ Հրատարակուեցաւ
նոյն ամառի յաջորդ թուոյն մէջ Կ.
Վ. բնդարձակ յօդուածն, իբրեւ պա-
տասխանի Շիրակացոյ Յովհ. Օձնեցւոյ
Թորագիւտ թղթի և մի բնութեան առթիւ
առանձին թերթով լոյս տեսած յօդուա-
ծին: Այնպիսի յայտարարութեան համեմատ՝
հակակիրներուն հետ համակողք իսկ կը
յուսային ի հարկէ, — ինչպէս գիտել կու տայր
ամսօրեայ Հանդեսն, — տեսնել մի տելի
լուր՝ և աւելի գիտնական պատասխանի, ու-
րով միայն պիտի պահուէին Կ. Վէն ե-
ղած հրաւերին՝ և մեր նախնիքը ուսում.
նասիրելու պայմանքն և սահմանքը: Սակայն
Կ. Վ., չնայելով առ Մշակ ուղղուած պու-
ռոտախօս յանդիմանութեան, անհաւատա-
րիմ գտնուեցաւ իւր տուած խոստման, և
արդիւնքն ալ սպասուածէն բոլորովին տար-
բեր դուրս եկաւ: Նա՝ մէկ կողմէն նկատե-
լով թիւրիմացութեամբ զՇիրակացին իբրեւ
ներկայացուցիչ Բազմավիպին և Մխիթա-
րեանց, — չէսլելով որ ընաւ հիմն չկայր
այդպիսի մի նկատողութեան, — և միւս կող-
մէն սաստիկ վիրաւորուած զգալով ինքզինքը
այն ջախջախիչ փաստերէն, որովք ցոյց տրուած
էին իւր անձնուհասութիւնն և թիւր չաս-
կացողութիւնները՝ նախնեաց զատական լե-
զուի և գրականութեան մասին, օւրիշ միւ-
կոյ չէ գտած ազատելու զինքը կապող և կաշ-
կանդող կապանքէն՝ բայց եթէ թոյլ տալով
իրեն անվայել կերպով տեղալ և վիժել այն-
պիսի թշնամանքներ, որոնք ստուգիւ ամօթ
և շառագունանք կը բերեն ո՞ր և է փոքր

ի շատէ կրթուած մարդոյ, թող թէ պատիւ
է՞միածնական մի վարդապետի:

Այո՛, Արարատի 353-364 լիբրն ոչ այլ
ինչ են ըստ մեծի մասին, բայց եթէ պօշալի
թշնամանքներ և հեգնաբանութիւններ, որոնք
Շիրակացոյ անձին և յօդուածի սահմանէն
անդին անցնելով՝ տա հասարակ Մխիթա-
րեանց և կաթողիկէութեան պատիւը կը
չօյակին. վատթար կիրքեր՝ որոնք զգուանք
միայն կը պատճառեն կիրթ լսելեաց: Սա-
կայն, ինչպէս մեզ՝ այսպէս և ամէն բա-
րեկիրթ հայու համար կարեկցութեան առ-
ժանին այն է, որ այդպիսի նողակալի կիր-
քեր՝ դժբաղդաբար իբրեւ զօրեղ փաստեր՝
Ս. Գրիգորի նուիրական տաճարի կամար-
ներու տակէն կը հեղուն և կը գեղանին,
յորոց իմաստութիւն և շնորհ արժան էր
որ ճառագայթէին: Ինչպիսի տխուր հակա-
պատկեր անգլիական աստուածաբաններուն՝
Հաովմէականաց հետ զործածած լեզուին, և
նոյն իսկ Վարդըստընի վերջերս առ սրբազան
Քահանայապետն Լևոն ԺԳ. գրած թղթին
և Կ. Վ. զործածած լեզուին մէջ: Անդ կ'ար-
տափայլէ եւրոպական կրթութեան և լրջա-
միտ ուսումնասիրութեան ազնուութիւնն, իսկ
աստ՝ կիրքեր միայն, Կ'երեկ թէ այդ թուղթն
ևս՝ Վերլէրի գրութեան պէս՝ ախորժելի չի-
նելով ժամանակակից նորութիւններուն սի-
րահար Կ. Վարդապետին, այն պատճառաւ
իսկ չտպիք Արարատի մէջ, որը պիտի ծա-
ռայի իբրեւ օրինակ ազնիւ վիճարանութեան:

Մենք չենք կարծեր, որ այդպիսի բերան
մի՛ ըլլայ բերան նաև ոյլ է՞միածնի միա-
բանութեան, ինչպէս նա կամակորութեամբ
ուզած է ներկայցնել զՇիրակացին իբրեւ բե-
րան Մխիթարեան ուխտին. մանաւանդ թէ
գիտենք իսկ, թէ կան ոչ սակաւ մշակուած
սրտեր և մտքեր այն տեղ, որոնք դատա-
պարտած են և կը զատապարտեն վիճաբա-
նութեան այդ եղանակը: Յամենայն զէպս՝
Կ. Վ. իւր այդ վարմունքովը կը յիշեցնէ
մեզ Տանտաղասի առասպալը: Հինաւուրց դիւ-
ցազն՝ ոտքէն մինչև բերան լոյց մէջ թա-

1. Կը յիշեմ անշուշտ Արարատի ընթերցողներն, որ
այսպիսի մի հրուէք եւ առաւելան մտմոյն և աստուա-
ծաբաններուն ուղղեք Կ. Վ. նախընթաց տարին.
բայց շատ բարեբաղք գտնուեցաւ, որ իւր հրուէքը
չհասաւ նոցա, ապա թէ ոչ՝ իւր հետ ուրիշներ եւ խոյ-
տատակ պիտի ընէր, մեծագոյն սոսկիւք:

դուած՝ դարձեալ լուր, դարձեալ աղբիւրներ կ'երազէր. իսկ սա՝ գտնուելով Էլմիածնի ճոխ մատենադարանին, մանաւանդ թէ Հայկական գրականութեան մէջ, ուրիշ բան չերագեր, բայց եթէ պղտոր աղբիւրներ և խեղաթիւրումներ՝ Կիրդի, Օձնեցւոյ, Մաթուսաղայի և այլոց վարդապետութեան մասին և այսպիսի խեղաթիւրումներ առնի կը կազմեն նորա քնաշխարհն և բոլոր գրասանքը։ Նա կ'ուզէ, որ Շիրակացիին ևս ամէն մի նոր եղջիւրուաքաղի առջև գլուխ ծուէ և ընդունի պայն իբրև ճշմարիտ. և որովհետև չընդունի չէր այսպիսի աղբիւրներ, — այսինքն է՝ Օձնեցւոյ անուամբ Կ. Վի հրատարակած ճառը, որ թէ՛ շարաքանութեամբ, թէ՛ վարդապետական պարունակութեամբ և թէ՛ այլ ամէն պարագաներով ընդդէմ էր ռուսականաց ճառին Հակապատկերը կը ներկայացընէ, — այն պատճառաւ իսկ նա պատմական՝ Հիմունքէն խոտորած կը համարուի. իսկ ասածներն « դասանարանական, կարդիկոյսիս » և այլն կ'անուանին։ Բունի բուն ընթերցողաց կը թողունք դատել, թէ կաթիլիկութիւն է այդ, թէ՛ ընդհակառակն անաչառ քննապատկերն։

Սակայն Կ. Վի՝ այս և նման ենթադրական խուսափումներով *, — զորս ինքն իրեն և ու-

4. Այս տեղ դիտել կու տանք ընթերցողաց, որ Կ. Վ. պատմական հիմունք չունի՝ կը նախկայ միայն այն մի քանի պատմագրութիւններ և դասաւարտական թղթեր, որոնցմէ ոմանք նակագրական կուտակութեամբ և ոմանք տգիտաբար չընթերցելով երկուք բնութեանց վարդապետութեան նեպտորականութիւնէն բաւականովն աւարել լինելը՝ գէ՛մ գրեւ նն, մէկը միւսէն լսածը նիւթապէս կը կենդնի։ Իսկ բոլոր այն կաթողիկոսներն, կորովի մատենագիրներն և ամբողջական նայ ազգաբնակչութիւններն, որոնք Կիրիկեցւոյ և Յունաց բաժնի Հայոց հետ է՝ ընդունած է՝ վարդապետած են աստուածաբանութեան երկուք բնութեանց և մի անձնաւորութեան ճշմարտութիւնը, իբրև « վաղամտի և եղբոր » կը նկատուին. իբրեւ այն թէ՛ Վլասին և Եղբ և այլ կուտակողիկոս՝ տոկական անկերք ըլլալին և չունենային իրենց կամակից, որոշ և ժողովրդական կուտակչութիւնը, կամ լաւ ևս հայրապետական բարձր նշխրաւորութիւն։

* Յիշուի ցուցնելու նամբ, թէ Կ. Վ. էն մէջ բնութեաններն ենթադրական փախուսածներ են և ոչ ի՛նչ նուր փաստեր, կը կ'ստուգանք այստեղ անոնց զգուշաւորները՝ իրենց պատասխանով։ Կ. Վարդապետան « Արարիկ » Սարգիս ամաստատորին մէջ՝ րատարակած ճառը Յով. Օձնեցւոյն նշաւաւստ զորք ցուցնելու նուա՛ր՝ կը բերէ Ս. փաստ, վասն զի այդ հասն ոչ Նեպտուականներն դէ՛մ գրուած է, և ոչ Աղոյիւնարեաններն, այլ ինչպէս վերնագիրն է տաւած՝ ընդդէմ դաւանո-

նաջարկած և ընդունած է իբրև պատմական ճշմարտութիւններ, — ուղիւ զմեզ հարուածեն՝ է՝ Արտանազդայ կուտակարի դերը կատարել. բայց այդպիսի հարուածներ ոչ մեզ կարող են երբէք վնասել և ոչ իսկ մեր դրած ճշմարտութեանց հիմունքը խախտող և խանգարող նոր Շիթարներ հասնել։

Շիրակացիին միւրջ չունի այս տեղ Կ. Վի անձնական սլաւոյր ջօշափել, և ոչ այլ իւր պատուոյն վրէժխնդիր լինել. վասն զի այս կը լինէր անազնութիւն, կը լինէր հաւա-

ղաց զմի քրիստոս յերկուս բնութիւնս. — Բ. փաստ, զի կը վերանայ իաշիցարի գործածութեան շատաւորութեամբ, որ գլխաւոր և առաջնակարգ խնդիր է եղեր միայն է՝ Ը. դարերում. — Գ. փաստ, զի սո՛ղմէ անունը, որ ԺԲ. դարէն վերջ այդ նշանակութեամբ յեշտակուել կարող չէր. — Դ. փաստ, զի յեղափոխեալ աստուածացաւ բացատրութիւնը Ն. Շնորհալին ևս գործածած է, Ամայր դաւանին դրած թղթոյն մէջ։

Սակայն մենք կը պատասխանենք, թէ զմի քրիստոս յերկուս բնութիւն միւղաւամբ ընթերցողներէն չեն կերաւ ըլլալ. վասն զի սոցա սովորական ձևն է դաւանել կամ զմի քրիստոս յերկուց բնութեանց (ինչպէս ունին նախեւոր մեր), և կամ՝ երկուս բնութիւնս ի մի քրիստոս. անձնութիւն վերնագիրն՝ օտար է ուրեմն ի՛նչ փառնաբանականաց, այսպէս նաև յՕձնեցւոյն։ — Իաշիցարի խնդիրն ասարակոյս չկայ, թէ ոչ միայն Է և Ը. դարերում, այլ նոյն իսկ այն օրէն, երբ Հայք կարեցին իրենց կրօնական յարաբերութիւնը Հռոմոյց հետ՝ սաստիկ վէճի նիւթ ծռալ՝ մինչև ԺԲ դար. այսպէս նաև այս դարէն մինչև Չամչեանի և Գաթալեանի օրերը միշտ վիճաբանութեան նիւթ եղած է. թէ՛ սաղապին եկեղեցական գրուածոց և թէ՛ մեր կաթողիկոսաց թղթերու մէջ։ Թող կարգայ Կ. Վ. խաչիկ կաթողիկոսի օրով առ մեղադրութիւն Սեբաստիոյ, և Շնորհաւոյ ժամանակ առ Կիո Մանուէլ կոյսրն դրած Հայոց պատախարհներն։ Այսպէս նաև Մատթէոս Ունայեցւոյ, Անանիա Մանսեցւոյ և Յով. (Սարգաւազ) վարդապետի, այսպէս Չամչեանի, Ալեքիանի, Աւետիսեանի և Սիմեոն կաթողիկոսի գրուածոց մէջ։ Ուրեմն ոչ միայն նաև պատմական է, այլ և անարատաբար՝ իաշիցարի խնդրէն եզրակացնել անձնութիւն հասնի Ը. դարուն գրուած լինելը։ — Այսպէս կը կապայ նաև մոլորեցնող անունէն՝ յառաջ երևուած փաստը, գիտնելով՝ որ այդ անունը ի գործ ածեւ և Օձնեցւոյն յառաջ՝ Եղբիկ. այսպէս նաև Օձնեցւոյն վերջ ոչ միայն ԺԲ. դարու եղբիկներն, — ինչպէս ենթադրած է Կ. Վ., թղթաւորելով Հայկական զեմալ բառաբանը, — այլ և Ոսկեփորիկն և մինչև նոր ժամանակներս՝ Թոնդրակեցւոյն և ուրիշ աղտաղաւորաց դէ՛մ գրող կամ գտնող ակնարկող եղբիկներն։ Ունի մի, որ միայն կարող էր նշանակութիւն ունենալ այս խնդրոյ մէջ, պիտի լինէր Պաղիկեմա մտուքը, զոր կը յիշէ Օձնեցի, և սակայն այս իսկ յիշուած չէ անոնա-

սարկէ նորա աստիճանին՝ Ուլկուզէ կ. Վէ մասին ճիշդ գաղափար կազմել, թող կարգայ անոր՝ Մետրոլ Վ. Տէր-Մովսիսեանի, Մագիստրոս Գր. Խալաթեանի, Գալուստ Տէր-Մկրտչեանի և ուրիշներու հետ ունեցած և Արարատ ամապարի մէջ արդէն արձանագրուած վիճարանութիւնները, նոքա միայն բաւական են ներկայացնել անոր ներքին մարդու ճշգրիտ լուսանկարը։ Սյն առնեն պիտի տեսնէ ընթերցողն անպատրուակ Արարատի խմբագրութեան և Էլմիսանի մէջ կատարած անոր խիզախ ոսնձգութիւնները, զորս նա պատրուակելով՝ ուզած է անարդար կերպով Միթթարեաններուն թել, իւր դառնութեան սևագոյն մաղձովը զանոնք

մրտելու համար։ Սակայն այնպէս ամառնայն գիտէ, թէ սոցա՛ ազդին և օտարաց առջև ունեցած վարկն՝ ոչ կ. վարդապետի մի շնորհիւ բարձրացած է և ոչ այլ անոր թշնամութեամբը կրնայ երբէք խոնարհիլ։ Ուրիշ սրտին հետ՝ բոլոր մտաւարական գործունէութիւններն իոյ անկեղծօրէն ազդիւր բարօրութեանը նուիրուած են։ Եւ այս նուիրագործութիւնն եղած է, ոչ թէ կ. Վի պէս լոկ խօսքով կամ անհասական տեսակետով, այլ գրեթէ երկու դար անընդհատ կատարուած գրաւորական և կրթական գործերով, զորս օտարաց հետ բանիւրուն ազգայինք իոկ միշտ ճանաչեք և յարգեք են։ Հետևաբար Միթթարեանն Եւրոպիոյ քաղաքակիրթ այնպիսի

նախնի հաւան մէջ՝ Կ. Շնորհալայ՝ Գրիգորի կաթողիկոսի կողմէն է Միջագետք Առողջող կողեցեայ, կամ Ամսյք դաւառին դրած Թղթոյն մէջ ոչ միայն «յեղափոխեալ աստուածացաւ» բացառութիւն չկայ բնու, այլ անոր նման բացառութիւնք իսկ իբրև մուրաբան մերժուած են։ Շնորհալայ՝ Գր. Աստուածաբանի ծանօթ ռասածովք կը մեկնէ Գրիգորոսի մարգեղութեան խորհուրդը, բաւով. «Քանզի խառնիսլ՝ միացոյց յորովայնի կուտին զերակամ ըմութիմս մեր՝ քեզ ամեհի իւրում ըմութիւնամ... ոչ փոփոխմամբ և այլայլութեամբ, այլ խառնմամբ և իրաւորութեամբ ամճառապէս»։ Մեզ էլ վերջ թուելով մի առ մի Գրիգորոսի անօրինական կերբերն՝ «Հոգիս յոժար է, բայց մարմինս սկիւր»։ Ոչ ի՞նչ կամ, այլ քոյք կերբիք, և այլն, վերայ կը բերէ. «Ջայս ամենեւեկ և պոպոկախի՛ ըստ մարգղութեան, տեսն զպոպոկեց եկեղեցւոյ, դեռալ վասն նորա. զի մի՛ կարծիքն զեւթ մանէ մարդիկ, կամ թէ ոչ տուեալ զբնութիւն մարդոյ, և կամ տուեալ փոփոխեալ յաստուածայինմս»։ Այս վերջին խորհրդա տեսարանկոյս թիւր նսակացութեամբ Շնորհալայն վերադարձն է կ. Վ., ինչպէս Օմեհեւոյն քով միոյն համար ասած՝ «յոյժ չարաչար զմին դատանիս ասացեալ բնութիւն» իսպառնի այլ երկուսի վերադարձն է։ Սուտ զբարոյարարութեան և տեսն թէ Միթթարեանք այն պատճառաւ չեն կրտարակած այդ թուղթը, որովհետեւ Շնորհալայն բուրբուրէն տարբեր գաղափար յայտնած է այդ տեղ՝ բնութեանց և ներգործութեանց մասին։ Շնորհալայն ուրիշ անախղ զուտաներ ևս կան. շնորհալայ կը, որ անոնց մասին ևս կ. Վ. պայտին գարմանայն դիտողութիւնները բրած չէ։ Սուկայն մեզ կը ցանկայինք, որ օր մի յառաջ այդ թուղթին ալ յիշմիտիին տպուէր, և կ. Վ. անոր մէջ գրուած ճշմարտութիւններն մեզի պէս ընդունէր։ Հուսկ է վերջն կը զարմանայք, որ կ. Վ. յաստուածութեանց կը պնդէ զարձակալ (Արարատ երես 339), թէ անձանութի գուգամանակալ զերկուսմ ի մի գոյացոյց... և «հրկաքամչիւրոցմ անփոփոխելի ըմութիւնամց ի մի ըմութիւն չարաչարեաց», և ևս բացառութիւններն՝ նոյնն են Օմեհեւոյ և Եթէ յերկուց ըստ ըմութիւնամ ոչ կամէս

ասել զմին (այսինքն է Քրիստոս), կարէ յոյժ չարաչար ըստ ըմութեամ զմիմ գտածիս ասացեալ ըր. ըմութիւն» և, և այլն՝ բացառութեանց նեւ, զորս մէջ բերած է մեկնած ենք Գր. Տղայն պայծառ խօսքերով։ Միշտեւ Օմեհեւն կը դատաւարուէ զանոնք, որոնք իր ըմութիւն կ'ընէին ի Գրիգորոս ըստ ըմութիւն, իսկ անձանութն ընդհանրութեանց՝ կ'ընդունէր զայն և կը վարդապետէ։ Մենք կը թողունք, որ նայեալն նսակացողիսն ըսեն, թէ մենք ենք Օմեհեւ խօսքերը կատարողն, թէ ընդհանրական կ. Վ. Այլ այսպիսի կը յաւանդէ, որ եթէ մեր ընդգէմութեանս այսպիսի գնահատութիւն է զործածելով և որ զբաղուել է կեղծ գրականութեամբ և պիտի զգալի, երբէք չպիտի կրնայ կեղծ՝ վաւերականէն որոշել, ինչպէս ասքերը պիտի փոխող մէկն չի կրնար ապրտակել՝ սենէ զանազանէ։

Ս. Կիւրղի վարդապետութիւնն և անոր նաւազատ միողը, զոր մեզ ըստ բազում գլխոց է պայծառ փաստեց ցոյց տուած էինք, կ. Վ. լուսթեանքը անցած է այդ խնդրոյն լուծիչ և կարեւոր կէտանու միջակէ։ Մենք ընդգէմութեան ինչպէս ամէն մի քայլն, ամէն մի փաստն, այսպէս և այս տեղ արածն՝ շատ խիզախ է չափազանց պարթեական։ Այս, նա յառաջելով Տիւրքիւնէն, զմին, Պարսկա և Մարբուրդի մատենագարմանքուն միլին, կարգաւով Կիւրղի գրուածները պարունակող Միշտէ և Մանուկ աւագին նատրեներ, կը քերէ մի միայն վկայութիւն, երկուս և կէս տող յուսարեւով նանկերը. «Խոտաւանիմ... ոչ երկուս քնութիւնս զի Որդին՝ մին երկրպագելի և միւսն ոչ երկրպագելի, այլ մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացեալ»։ Այս վկայութիւնն կ. Վի կարծիքով կը պարզէ Կիւրղի վարդապետութեան բոլոր գաղտնիքը. վասն զի փոխառակ նոժճճճճճճ Ի՛ նա գործածուած է քոսէ շատը։

Սակայն մենք կրնանք տեսնել, որ եթէ Արաբաւմ ընթերցող տէրտէրմբնու կողմէն է այդ փաստը շատ իսկ է, իսկ եթէ իւր կողմէն՝ ոչինչ։ Կարեւորէր խոցուած նշխրուն՝ որսորդն ապաւեղու համար՝ գտնաւորամատչելի անտաններում խոյս կու տայ, չգիտեալ լով, որ նոյն իսկ այդ ապաւանտանքունն մէջ և իւր

կեդրոնը գտնուելով՝ պէտք չունի այն տեղ յուզարկուելու՝ և՛ Վի չորս տարուան կարճ միջոցում ստացած գիտութեան օղորտողնիւր սեթեթիւ և նօթի մնալ ազգային գիտութեան և գրականութեան։ Ուստի, ինչպէս փոքր գութեամբ դէպ ի արեգակն նետուած ցեխը՝ նետողին միայն արատ կրնայ բերել, և ոչ թէ արեգական, այսպէս և Միթիթարեան կամ կաթողիկեայ անունը նախատող և՛ Վ. մի ազգակի իրեն նախատինք բերած է այնու, և ոչ թէ մեզ. որովհետև դրժեց նա տնայնակ կերպով իւր տուած խոստման, և գիտնական արցունքով և մեր մէջ բերած փաստերու սահմանէն փտարանելով՝ ենթադրութիւններով և նախատինքներով միայն կրցաւ

մերայ կրած եղբիւրներով աւելի դժբաւ կը բռնուի։ Ճիշդ այսպէս ըսած է և մեր ընդդիմախօսը, գիմելով Միշեյէ։ Լաւ կը լինէր, որ նա փոխանակ Adrginas, Migne 76, 1212, անմատչելի գործը ցոյց առաւ, — որ արքունական գրատանց մէջ միայն կը գտնուի և քիչերէն է ծանօթ, — ըսէր հետաւոր մարաբ, թէ այդ տեղին Ս. կիւրքի ո՞ր դրութեանն առած է, և թէ այդ գրութեան հազարատուութիւնն առանց երկնայութեան է։ Կ'երևի թէ և՛ Վի փաստի գրութեան նետ՝ դաշնաբէն ևս այդ կերպ կուլուներ ընդուն մէջ է, ինչպէս քիչ յառաջ տեսանք Շնորհաւոյ մասին։ Սակայն մենք կը պահանջէինք մեր ընդդիմախօսէն, որ կիւրքէն մէջ բերած այդ տեղոյն միայնը պարզէր մեզ, իթէ հապցած է երբեք. այսինքն է «Ոչ երկուս ըմուծիւմ» — օժ ծօ փօսէս, այլ մի ըմուծիւմ» — ձէլա լաւ փօս» և լաթեանքէն natura բառին տամմըը գործածուած է, թէ ընդհանրական Subsistentia, այն է՝ ամօծիւմ, միաւորութիւն, և կամ լաւ ևս քրիստոսի խմատուով։ Առաջինն՝ անկարելի է, թէպէտ և՛ Վ. բերս անգամ ուղէ անկարելին՝ կարելի ընել. վասն զի իթէ ըմուծիւմ — փօսէս — natura բառը համիմոս և համամումնաբար՝ և ոչ իթէ ըստ միաւորութեան առած ըլլար Ս. կիւրքի՝ Քրիստոսի աստուածութեան և մարդկութեան կերպը, այն ասան չլսեմք մար այլ ևս իրական զանազանութիւն Գրիստոսի աստուածային և մարդկային բնութեանց մէջ, որով Քրիստոս՝ ոչ միայն աստուածայնա՞յն՝ այլ և մարդկային բնութեամբն, զոր առ ի կուսէն, պիտի լինէր համադրակից Հօր և Հոգւոյն. և այն ամենայն աստուածային ասորոգելիք որ ըստ ամօծմաւորութեան միաւորութեամբ միայն կը ստորակնէր Գրիստոսի, պիտի ասորոգուէր և՛ ըստ ըմուծեան, Այսպէս և մարդկայինք՝ որ ըստ միաւորութեան միայն կրնանք Քրիստոսի աստուածութեան ասորոգել. նաև ըստ բնութեան պիտի ընծայուէին նոյնպէս Հօր և Հոգւոյն։ Սակայն այսպիսի մտորումը վերադասութիւնն ոչ կիւրքի մտքն անցած է երբեք, և ոչ իսկ մեր սուրբ Հաբէ ընծայել են նախ։ Ուրեմն կը մնայ սակ իբրև ճշմարիտ, թէ կիւրքի այս տեղ գործածած ըմուծիւմ

պատասխանել, որոնք հաւասար են ոչ մի պատասխանելու և ոչ դիմ կրնան բաւականութիւն տալ։ Որովհետև առաջին վիճարանութեամբ մի շուտ փոխեցնաւ իւր կերպը։ Մէկ խօսքով թողուց նա գրոցը՝ և ձեռք առաւ բրոցը։ Եթէ նա ունէր նոր փաստեր՝ ինքու ուրեմն համաձայն և ի միասին միւր ասածներուն մէջ չի բերաւ, ինչպէս մենք մէջ բերելով մի առ մի իւր ասածները՝ ցուցած էինք նոցա անտեղութիւնը։ Այո, մենք պարզապէս ասած չէինք, այլ և պայծառ կերպով ապացուցած, թէ նա ստուգել անձնանհաս է մեր նախնեաց դասական իղուին, պատասխան և գրականութեան աստուածային, Չայս կը վկայեն և՛ Վր մօտէն ճանաչողներ, զայս

— փօսէս նոյն միտքն ունի, ինչ որ իւրիշ հապցը և մի տեղ նօստօսէս — ամօծ, ամօծմաւորակամ միտութիւն, դէմ է քրիստոս։ Ուրիշ կերպ միայն անհասկնալի կը մնայ և չլսեմք։

Այս մասին մենք մեր նախընթաց յօդուածի մէջ չիմաստը փաստիւր բերած էինք արդէն և Ն. Շնորհաւոյ բարձր ներդրումներէն հաստատած. սակայն եկուր տես, որ այս անգամ ոչ կաթողիկ և՛ Վարդապետն է, որ ճշմարտութեան լուսոյն դէմ աչք կը գցէ։ Բայց մենք նորա մոաց միջաբըը մաքրելու և բոժոյ ի բաց սրբելու համար՝ կը թողուք, որ պահ մի խօսի և՛ Վի նախապաշարունքէն ազատ Ս. Սահակ Պարթէ մեծ հայրապետն։ Կը գրէ նա Աշտիշատու ժողովական հաւին մէջ՝ ընդդէմ Նիստորի և թեոքորոսի Մոզաքականացուց. «Խոստովանիք զքրիստոս յիրկոց ըմուծեանց՝ մի առամօծմաւորութեամբ, մի դէմ և մի քրիստոս»։ Ո՛վ չի տեսներ, թէ այս տեղին մեր առած մեկնութեամբ միայն կը համաձայնի կիւրքի յիշեալ տեղոյն, և ոչ թէ ինչպէս կը կամակորէ և՛ Վ. այսինքն է՝ կիւրքի քով մերժուած երկու ըմուծիւմներն (օժ ծօ փօսէս) պատեղ ընդունուած են մի առամօծմաւորութեամբ, մի քրիստոսի և մի դէմ մէջ. որով կիւրքի յիշեալ փօսն հետաւոր է Սահակայ մի առամօծմաւորութեամբ, մի դէմ և մի քրիստոս թարգմանաբէն նա։

Խորովիլի են մեկնելով Աստուածաբանի և կիւրքի «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ» առածը, անգէն կը յարէ, թէ «ըստ միաւորութեանմ աստուածն զմին ասել բնութիւն»։ Իսկ Աստուածաբանն թեոքորոսն ասոյ անհիմար, որ ըստ ըմուծեանմ կամ համաունեւաբար մի կ'ըսէր զՔրիստոս, Ամենասոյ՝ առ Եղեղիտեա զարած մէջ կը բերէ խորովի ըսելով. «Ո՞ր դժուր զգայուցին տակ մի բնութիւն Բանին և մարմնոյն. զի ըստ հաւմագոյնութեան տակ մի բնութիւն ի քրիստոս» անուց զԵրրորդութիւնով չորրորդութիւն»։

Դաւիթիկ Բազեկանդայի աստուածաբանն, որուն դիմեց Զ. դարուն Ն. Առաքակեցիկն՝ հարցնելով, թէ «Զմէջ միտս մի բնութիւն տակն առնէ Բանին և մարմնոյն», կը պատասխանէ «Որք մի տակն ըմուծիւմ

ստիպուած է խոստովանել չափով մի նոյն ինքն
կ. Վարդապետը: Եթէ այս, և միայն այս
եղած է մեր տուած վիրաւորանքը, թող ինքն
ևս նոյն չափով վիրաւորէր զմեզ, և ոչ թէ
նախատել Մխիթարանները և կաթողիկէու-
թիւնն առ Հասարակ, և վարդապետի մի ան-
վայել լեզուով Պապերու պատուին անցնել,
ինչպէս օգաշուն՝ ամպերու: Մոռացեր է նա
ի սպառ, թէ ազգային եկեղեցական պատ-
մութեան մէջ ևս եղած են դժբաղդաբար
այնպիսի բարձր եկեղեցականներ, և այն ոչ
միայն միլիոն դարերու՝ երբ ժողովուրդը
առհասարակ ապականուած էին: Սակայն
զարմանալին այն է, որ օրուան դիւցազն՝
ամէն կերպ լուսանք և սպառնալիք թափե-

լէն վերջի իւր վերջութանին մէջ կը յաւելու-
« Բայց Զեղ (Մխիթարեաններով) խղճում
ենք իբրեւ հայ մարդոց » : Այս եթէ չարու-
թիւնն չէ, կատարեալ անգիտակցութիւն է
իւր գրածներուն. իսկ երբ մէկն անգիտակ-
ցօրէն կամ չարութեամբ կը գրէ և կը վիճէ,
անոր ասածներուն ոչ ոք կրնայ հաստք ըն-
ծայել, թէ և ըլլան դժբա դիմակաւորուած
ճարպիկ և ճոխ կոչումներով: Ուստի մենք
նորա այդ կերպ վարմունքը ճանաչելէն վերջ,
անելորդ կը տուգրակի որ և է վեճարմունքիւն,
— թէպէտ և ի սկզբան մտադիր էինք այդ
առթիւ ի լոյս ընծայել մեր նախնեաց ցարդ
անյայտ մնացած գրուածներ ևս, — ի հարկէ

Բամիմ և մարմնոյ՝ կատարեալ եմ ամբարիշտք.
դի մարմինն է կուսէն է, և կոյսն՝ դուստր Դուժայ...
Իսկ չորրորդութիւն այսպէս ասենք այնպէս խոստ-
մանոց զՄխիթարութիւնն, զի մի բնութիւն է Աւ-
ուուած Հաւր և Բանին և սուրբ Հոգւոյն » :

Աստուգու արքեպիսկոպոսն Զաքարիա, որ և վառա-
կայր թաղէի վանուց, զբերով առ արքեպիսկոպոսն
Սիւնեայ՝ Յովհաննէս Օրպիսեան, զեւսուելի որոշ կեր-
պով կը սանմանէ կիւրդի միտքը. « Իսկ եթէ ոչ զկիւր-
դին ի մէջ բերցէ, թէ և նա մի բնութիւնն առ Բա-
նին մարմնացելոյ, գիտասցէ, թէ ոչ ուղիղ ընթերցող
իցէ թանկն կիւրդի, մի բնութիւնն մի ամբմ ասէ : Եւ այլ
ազգ՝ դի մի է առ բնութիւն Բանին մարմնացելոյ,
ոչ անգործ մարմնովն զԲանն մի բնութիւնն առէ, այլ
թէ Բանն՝ թէպէտ մարմնացաւ, մի է ընդ չօր՝ ըստ
աստուածային ըմբութեամբ. և այս յոյժ ուղիղ է և :
Այս թուղթն՝ ըստ ամենայն զիտու յախնիւն է կ. Վ.
Վին, ըսոյց մենք ուրիշ առթի կը թողուցն անոր հաւ-
արակութիւնը : Կ. Վ. այս ամենայն լուսով մեր նախ-
նեաց բերենէ, զեւս թի՛ղ պնդէ իւր մի ըմբութիւնը, « Է
նկատի ունեւով զարգափարմները և ոչ բառերը » :

Երկուց կամայ և ներգործութեանց աստին խոսրո-
վիկէն մէջ բերած մեր վկայութիւնը՝ մեր զէմ դաբ-
ձուցիք է կ. Վ. առարկելով որ Մաքսիմոս երկու ներ-
գործութեանց և երկու կտակերի ամենապատուելի նա-
տագովն էր, որուն կարծիքն ևս, իբրեւ միւս ծայրայե-
ղութիւնն Վաղարշի և Թեոփիլի կը ներքէ խոսրովիկ.
ապա ուրեմն .

Սակայն մենք կ'ըսենք, որ այդ՝ մերիկին կակառակ
փաստ չէ, այլ ճարտար փախուստ. խոսրովիկ անձամբ ա-
ռիթ լուսելով լսել Մաքսիմոսի՝ ընդգէմ Բիւրանի և ուրիշ
Միակամայց բերած անդիմադրելի և պապանձեցու-
ցիլ փաստերը, կարող էր ի լրոյ սխալ զազափար ու-
նեալ նորա վարդապետութեան վերայ, ինչպէս ուրիշ
յստեղ. և իբրեւ իսկ ունեցեր է, ենթադրելով, որ
Մաքսիմոս « ըստ միակողմնութեամբ » կը դնէ ի Քրիստոս
առա երկու ներգործութիւններ. միեղձեւս առ ընդհա-
ռակն՝ ըստ ըմբութեամբ և իբրեւ նեւեանք ընտրութեան կը
վարդապետէ երկուս կամս և երկու ներգործութիւններ :

Եւ խոսրովիկ ինքնին կ'ընդունի զայն՝ ըսելով. « Եթէ
ըստ ըմբութեամբ ոչ զայնուսիկ ասիցէ զոչ, ոչ առաջոյ
հշարմութեան զտանի ասացել զոչ » : Իսկ առ Ա-
թանաս Անտիոքացի զբաժ թղթին մէջ կ'ըսէ. « Եւ
կիւրդի առէ. Անգիտասաւ՝ թողացուցաւ երբեմն մար-
մնոյ կրիլ զկիրմ : Եւ Գրիգոր Աստուածաբանն առէ.
Վաստակեալ, երկեւն, և արտասուեաց և քաղցեաւ
և ծարաւեալ աւրինալ մարմնոյն : Եւ Բարսեղ.
Մարմնոյ՝ որ ի ըմբութեամբ յարմարագոյն էր պա-
տահումն՝ թողացոյց » : Սակայն դուք ասացէք մեզ,
կ. Վ., խոսրովիկի՝ այս և ընդարձակաբար մեր նախնե-
ւոց յօդուածն մէջ բերուած խօսքերէն, — զորս դուրս
թողուցիք էք, — կարելի է արդեօք առանց չիկնելու
հակառակը հետեցունել : Եթէ խոսրովիկ չընդունէր
Քրիստոսի մէջ մարդկային կամք և ներգործութիւնա-
լոս բնութեան, ապա տաքնին ի՞նչպէս կարէր ասել, թէ
« Զի ինչն Բանն Աստուած զմարդկայինմ իւր ող-
ղէր զկամս և զմարմնոյն իւրոյ շարժել մերգործ-
ութիւնս և կիրս » , վասն զի չեղած բանն և ոչ իսկ
ուղղութեան և շարժման կրնայ երբէք ենթարկուիլ :
Սակայն կ. Վ. ի համար միշտ ստուերները ըսենք ևս
կոմսերը արածելն անործելի է. ըսոյց հոս պատմու-
թիւնն զուրա՝ մի քիչ տրամաբանութիւն ևս հարկա-
ւոր է : Պատմական ձակտնոյն և ամենկողմնորմ եթէ
ստուգաբանութեամբ չուղղին՝ նշանակութիւն չեն ու-
նենար անործութեան առէն, վասն զի պապկայց ևս կա-
րող են նոյնն պապայնի :

Հապէշներէ մօտին մեր ուշադրութեան վերպած
սխալը, արդէն մի քանի տող վերջ, ուր եղեալական
եկեղեցին միաբնակ առած ենք, ուղղուած համարելի էր
ըստ ինքեան. սակայն և այնպէս շնորհակալութեամբ
կ'ընդունինք ծայրիւ տիգի կ. Վ. մեզ ուղղեալ ազգէ :
Իսկ Մամիքեայակղիկեան թոմարակեցոց ուսում-
նասիրութեամբ մէջ՝ Աթիանասութեան, Մանիքեու-
թեան և այլ մի քանի կէտերու վերայ ձեր այլ ընդ
այլոյ ըրած դիտողութիւններն բոլորովին մի բնութեան
խնդրէն զուրս և անճա՛ բաներ լինելով, և ոչ իսկ պա-
տասխանալ արժանի կը համարինք. վասն զի մենք Մա-
նիքեայակղիկեան թոմարակեցոց աղանդի ծագումը

մնալով միշտ հաւատարիմ և հաստատուն
մեր պաշտպանած ճշմարտութիւններուն . իսկ
ձեռնհաս ընթերցողք թող բազդատեն մեր

յօգուածը՝ նորա տուած պատասխանւոյն հետ՝
և այնպէս դատեն ազնիւն և վատը :

Շիրակացի

պարզապէս ի նկատի առնելով չէ՛ որ մեր իբրև հակա-
սակաւն իշտանկած գաղափարներն յայտնած ենք : այլ
և անոր յառաջխաղաց գաղափարով : Միով բանիւ
զուք կարո՞ղ էք ըսել , թէ մեր ըստ խօսածն և գրածն
յաւիտենական ճշմարտութիւն է : Այսու ամենայնիւ
լաւ կը լինէր , որ մեր այդ գիտազուժիւններն այն ժա-

մանակ ընէիք , երբ Գերմանիայում մեր Գաղիկիամ
աղամդի ուսումնասիրութեամբը պարագելով մեր թեր-
թերը շերտ ցանկութեամբ կ'ազէիք և կը կարգայիք :
Իւ սակայն տասր նամար իսկ՝ մեծ բանաստեղծի նեա
պէտք է ըսել . Das ist deine welt ! das heisst eine
welt !

